

երկու երևույթներն ուսումնասիրում է առանձին-առանձին, ըստ որում գլխավոր ուշադրութիւնը դարձնում է սօցիալական դինամիկայի վրայ, համարելով նրան սօցիոլոգիայի գլխավոր մասը:

## Ս Տ Ա Տ Ի Կ Ա:

Ստատիկայի մէջ կօնտը զբաղւում է այն մի քանի երևույթներով, առանց որոնց սօցիալական դինամիկան անհասկանալի կը լինի: Նա քննում է այն պայմանները, որոնք անհրաժեշտ են, որպէս զի հասարակական կեանքը կարողանալ գոյութիւն ունենալ:

Անհատը, այսինքն իւրաքանչիւր մարդ, հակում ունի դէպի հասարակական կեանքը: Սխալ է այն կարծիքը, իբր թէ մարդկային բնավորութեան մէջ գլխավոր տեղը միտքն է բռնում, և իբր թէ հասարակական կեանքը առաջ է գալիս նրանից, որ իւրաքանչիւրը որոշ օգուտ է սպասում հասարակական կեանքից իր պահանջների համար: Մարդիկ հասարակութիւն են կազմում, առաջ քան ընդհանուր օգտի մասին գաղափար ունենալը:

Հասարակութիւնը, որպէս անհատների կազմակերպութիւն միշտ իր վրայ կրում է մարդու անհատական բնավորութեան կնիքը: Ուրիշ խօսքով ասած՝ հասարակութեան այս ու այն չափութիւնը բացատրւում է անհատի չափութիւններով: Ուստի մի առ մի կը թւենք այստեղ առհասարակ մարդու (անհատի) էական չափութիւնները:

1. Մարդ ի բնէ ծով է, չէ սիրում անընդհատ գործել, աշխատել: Նա փոփոխութիւններ է սիրում, մինչդեռ ամենայն մի գործունէութեան չափողութեան անհրաժեշտ պայմանը անընդհատութիւնն է: Դէպի մտաւոր աշխատութիւնը մարդիկ քիչ հակում ունին, ուստի շատերը ամենաափոքրիկ մտաւոր աշխատութիւնից չոգնում են, մինչդեռ այդ զբաղմունքը անհրաժեշտ է մարդուն: Ուստի մարդու մէջ մտաւոր գործունէութիւն առաջացնելու համար, հարկաւոր են կողմնակի պայմաններ, զրդիչ հանդամանքներ, որոնք մեծ մասամբ թէև բարձր չեն, բայց զօրեղ են: Որքան բարձր են այդ զրդիչ պայմանները, այնքան վեհ է մարդու էութիւնը: Եթէ մարդու կրքերը աւելի թուլ լինէին, անշուշտ հասարակաց կեանքը աւելի բաւարար կը լինէր: Բայց եթէ մարդիկ կիրքեր չունենային ու զեկալարուէին միայն մտքի աղղկացութեամբ, ապա հասարակական կազմութիւնը առհասարակ գոյութիւն չէր ունենալ: Զգացումները, կրքերը ոչ միայն հարկաւոր են միտքը թմրած դրութիւնից հանելու

համար, ալլև նրա համար, որ մարդու գործունէութեան ուղղութիւնն ու նպատակ տան, առանց որոնց մարդը կը շփոթուէր միմեանցից անկապ մտածմունքների մէջ:

2. Մարդու աչքի ընկնող երկրորդ չափութիւնն այն է, որ ոչ-բարձր ու աւելի անձնասիրական բնազդումները աւելի զօրեղ են, քան հասարակական ազնիւ հակումները:

Վերջին տեսակի հակումներն են, որ ընդհանուր բարիք են առաջացնում և ստեղծելով հասարակական կեանք, պաշտպանում են նրան: Այնուամենայնիւ անձնասիրական զգացումներն էլ անհրաժեշտ են, որովհետեւ նրանք են, որ թէ անհատին և թէ ամբողջ հասարակութեան ուղղութիւնն են տալիս: Եթէ մի հնարով բնաջինջ անէին մեր մէջ անձնասիրական զգացումները, մեր բարոյական քնաւորութիւնը բոլորովին կը մեռնէր, որովհետեւ հասարակական զգացումներն էլ, իրանց հիմքը կորցրած լինելով, անորոշ և անպտուղ բարեցանկութեան կերպարանք կառնէին: Քաղաքակիրթ ազգերի բարոյականութիւնը, որ պահանջում է մեղանից՝ սիրել մեր մօտաւորներին մեր անձի պէս, իսկապէս մեզ համար իդեալ է դնում, դէպի որը մենք պիտի միշտ ձգտենք, բայց որին հասնել երբէք չենք կարող: Սակայն հէնց այդ բարձր դիրքի մէջ էլ դարձեալ անձնասիրութիւնն է մնում որպէս հիմք: Ուրիշին իր անձի պէս սիրել, նշանակում է սիրել համ իրան, համ էլ ուրիշներին, թէև հաւասար չափով: Եւ իսկապէս ո՞վ կարող է ուրիշին սիրել, եթէ ինքն իրան չէ սիրում: Ուրեմն ինքն իրան սիրելը բոլորովին արատ չէ, միայն թէ այդ զգացումը չը պիտի այն աստիճանի հասնէ, որ թուլացնէ հասարակական, մարդասիրական զգացումը: Մարդասիրութիւնը զարգանում է մարդու մէջ մտքի զարգացման հետ միասին, որովհետեւ զարգացած միտքը աւելի հեշտութեամբ կարող է չաղթող հանդիսանալ ստոր կրքերի վրայ: Միւս կողմից՝ մտքի բարձր զարգացման համար, հարկաւոր է, որ հիմքումը մարդասիրական զգացում լինի, որովհետեւ բարի զգացումներն են, որ զօրութիւն են տալիս մտքին, գրողում են նրան դէպի լուս:

Ուրեմն հասարակական կեանքի համար նշանակութիւնը ունին զիշեալ երկու, իրար հակառակ, զգացումները: Բայց նայելով սրանց մէկի կամ միւսի զօրեղութեան աստիճանին, հասարակական կեանքն էլ աւելի կամ պակաս բաւարար դրութեան մէջ է լինում: Ար կործանուի այն հասարակութիւնն, ուր անձնականութիւնը ծալրաշեղութեան է հասել: Աւելի ամուր կը լինի այն հասարակութիւնը, ուր ոչ մէկն է պակասում և ոչ միւսը:

Հասարակութիւնը բաղկացած է ոչ թէ անհատներից, ալլ

ընտանիքներից, որոնք իրանք էլ մի մի փոքրիկ հասարակութիւններ են ներկայացնում: Ընտանիքը բաղկացած է առնուազն երկու անհատներից: Ընտանիքի մէջ են դառնում հասարակական կազմի սերմերը, այնպէս որ ընտանիքը միջնորդ է անհատի ու հասարակութեան մէջ: Ընտանիքի մէջ է, որ մարդ սկսում է քանդել իր անձնականութեան սահմանները ու սովորում է ապրել և ուրիշների համար:

Ընտանիքի կազմակերպութիւնը անփոփոխ չէ, այլ նա ձևակերպւում է ժամանակին ու տեղին համեմատ: Հին ժամանակների ընտանիքը պարունակում էր իր մէջ զերիներ, ինչոր այժմ վերացած է: Բայց ընտանիքը ունի և այնպիսի չատկութիւններ, որոնք նրա էական տարրերն են կազմում և առանց որոնց նա դոյութիւն ունենալ չէ կարող: Այդ չատկութիւններն են՝ իգական սեռի հնազանդութիւնը դէպի արական սեռը և փոքրերի հնազանդութիւնը դէպի մեծերը \*):

Մարդակազմական հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ թէ մարդկային ցեղի և թէ բոլոր ժողովուրդների մէջ արական և իգական սեռերի մէջ գոյութիւն ունի ֆիզիկական և բարոյական տարբերութիւն: Իգական սեռը, մանաւանդ մարդկային ցեղի մէջ, զրտնում է մի տեսակ մանկական դրութեան մէջ: Աինը տղամարդի չափ մտաւոր ընդունակութիւններ չունի, իր մաքի ներքին ուժի պակասութեան կամ թէ աւելի տպաւորւող բնաւորութեան պատճառով: Աինչև անգամ գեղարուեստի ասպարիզում կինը միշտ ցոյց է տալիս պակաս զարգացում, չնայելով նրա աշխատութեան մէջ նկատուած շքեղութեան ու սրամտութեան: Աինը չունի նոյնպէս վարչական ընդունակութիւններ, նոյն լակ ընտանիքի մէջ նա չէ կարող ընդունակ կառավարիչ հանդիսանալ, որովհետև չունի զօրեղ գատողականութիւն, բայց ունի զօրեղ զգացութիւն, մինչդեռ կառավարչական ասպարէզը հակառակն է պահանջում: Սակայն կնոջ մէջ աւելի ջերմ են քնքոյշ ու ընկերական զգացումները, ուստի և նրա դերն է ընտանիքին ու ամբողջ հասարակութեան մեղ-

\*) Այդ կէտի մէջ մենք չենք կարող համաձայնել Աօնտի հետ: Ընտանիքի մէջ եթէ տիրապետէ փոխադարձ սիրոյ զգացումը, դիտակցական համերաշխութիւն լինի, այն ժամանակ հնազանդութիւնը և կրօնական տեղ կը բռնէ: Արդ մարդիկ իրար հասկանում են և իրար սիրում, շատ էլ հնազանդելու կարիք չէ զգացւում:

մութիւնն ներշնչելով, սլաշտարանել նրանց աղամարդի սառն դատողականութիւնից \*):

Ինչ վերաբերում է ընտանիքի երկրորդ լատկութեան, կասկեք, որ ընտանեկան կեանքը միշտ եղել է և կլինի հասարակական կեանքի համար մի տեսակ դպրոց, ուր մարդիկ սկսում են մի կողմից հնազանդութիւն, միւս կողմից կառավարութիւն: Այս խկապէս՝ որտեղ կարելի է գտնել աւելի չարգանք ու հնազանդութիւն փոքրի կողմից և աւելի սիրալիր հեղինակութիւն մեծի կողմից, քան ընտանիքի մէջ:

Վերջապէս ընտանիքի մէջ սովորում է մարդ՝ կապել անցեալը, ներկան և ապագան: Միայն իր անձնով հետաքրքրող մարդու համար նշանակութիւն չունի, թէ ինչ է կատարուել օրինակ հարիւր տարի առաջ, կամ ինչ կարող է կատարուել հարիւր տարի չետու: Բայց հասարակական կեանքի համար անհրաժեշտ է, որ նրա անդամները դառն վերցնեն անցեալ սերունդներից և ապրեն ու գործեն, ի նկատի ունենալով ապագայ սերունդների բարօրութիւնը: Ահա թէ ինչ է նշանակում կապել անցեալը ապագայի հետ, իսկ այդ զգացման ընտելանում է անհատը ընտանեկան կեանքի մէջ, ուր նա սովորում է ցաւակցել հանգուցեալ տնացիների համար և հոգալ նորածինների ապագայի համար:

Ընտանիքներից կազմւում է հասարակութիւնը:

Կենդանական մարմնի հետադատութիւնները ցոյց են տալիս, որ որքան մի կենդանի բարձր է, կատարեալ է, այնքան առաւել նրա մարմնի կազմութիւնը բարդ է, այսինքն առանձին օրգանների թիւը շատ է, իւրաքանչիւրը այդ օրգաններից իւր որոշ գործունէութիւնը ունի, բայց սրանց բաղմատեսակ գործողութիւնները միմեանց ոչ թէ հակառակում են, այլ լրացնում: Հէնց այդպիսի բնաւորութիւն ունի և հասարակական մարմինը: Բաղմաթիւ անհատներ, որ զանազան լատկութեան ու որակութեան ընդունակութիւններ ունին, գործում ու ապրում են ըստ երևոյթին իւրաքանչիւրը իր համար, բայց իրօք ամենքն էլ աշխատում են մի ընդհանուր նպատակի համար, թէև շատ անգամ բոլորովին անդիտակցաբար: Ուրեմն հասարակական կազմութիւնը ուրիշ մի բան չէ, բայց եթէ կենդանական մարմնի զարգացման աւելի բարձր աստիճանը (չարունակութիւնը), հետեապէս հասարակագիտութիւնը կարող է նոյն իսկ կենդանաբանութեան մի ճիւղը համարուել:

\*) Այստեղ կանանց դերը չափից դուրս սահմանափակած է. Առհասարակ կանանց հարցի մէջ Կօնտը չէ կարող ժամանակակից քննադատութեան դիմանալ: Ս. Թ.

Աշխատանքի բաժանման երևոյթը նկատուած է արդէն ընտանիքի մէջ, բայց այստեղ նա չէ կարողանում շատ զարգանալ, որովհետեւ ընտանիքի անդամների թիւը փոքր է և մանաւանդ այն պատճառով որ այդպիսի բաժանումը հակառակ է ընտանիքի ոգուն: Ընտանիքը մի ընկերակցութիւն (ասոցիատիօն) չէ, որի անդամներից իւրաքանչիւրն իր շահն է որոնում, թէև ընդհանրութեամբ են աշխատում: Բայց ընտանիքը մի ամբողջութիւն, մի միութիւն է, որը հիմնուած է նախ և առաջ սիրոյ և համազգացութեան վրայ: Ընտանիքի մէջ սակարկութիւն չկայ, այլ նրա անդամները շարունակ միմեանց համար են ապրում: Ուրիշ բան է հասարակութիւնը:

Իհարկէ հասարակութիւնն էլ ծագում է փոխադարձ, ընկերական հակումներից: Միայն թէ, երբ մենք վերցնում ենք հասարակութիւնը լայն մտքով, օրինակ մի ամբողջ երկիր, կամ թէ ամբողջ մարդկութիւնը, ապա այստեղ առաջին տեղն է բռնում սրդէն ընկերակցութեան սկզբունքը:

Հասարակական կեանքի համար գլխաւոր դերը կատարում է ընկերակցական սկզբունքը, բայց ընկերակցութիւնը պէտք է հասկանալ ամենալայն մտքով: Մարդիկ ընկերակցում են ոչ միայն տնտեսական գործեր կատարելու համար, այլ մարդկային բոլոր, բազմատեսակ, գործողութեանց մէջ էլ դեր է խաղում ընկերակցութեան սկզբունքը: Բացի այդ՝ ընկերակցութիւնը գոյութիւն ունի ոչ միայն անհատների մէջ, այլև զանազան դասակարգերի և ազգերի մէջ, նոյն իսկ միմեանց չաջորդող սերունդների մէջ, քանի որ սրանք ամենքն էլ, թէև շատ անգամ, անդիտակցաբար, մասնակից են ազգերի կամ մարդկութեան ընդհանուր աշխատութեան: Վերջին նպատակների չաջողութիւնը կախուած է նրանից, թէ որքան խելացի կերպով է կազմակերպուած ընկերակցութիւնը, ուրիշ խօսքով ասած՝ որքան խելացի կերպով է բաժանուած աշխատութիւնը անհատների, ընտանիքների, դասակարգերի ու ազգերի մէջ: Աշխատանքի բաժանումը հեշտացնում ու նրբացնում է մարդկային կեանքը նրանով, որ իւրաքանչիւր անհատ, կամ դասակարգ, կամ ազգ... սահմանափակուելով որոշ գործողութեանց մէջ, աւելի լաւ է կատարում նրանց:

Բայց աշխատանքի բաժանումը ունի և իւր վնասակար կողմերը: Նա զանազանութիւն է լաւաջացնում մարդկանց մէջ մտաւոր և բարոյական տեսակէտից: Նա աշխատում է ճնշել «ամբողջականութեան» ոգին, կամ գոնեա խանդարում է նրա զարգացմանը, չանուն մասնաւոր նպատակների: Նոյն իսկ բարոյական տեսակէտից իւրաքանչիւր անհատ աւելի կախուած է դառնում ուրիշներից և իր

մասնաւոր զբաղմունքի շրջանում շարունակ ի նկատի է ունենում սեփական շահը: Որոշ զբաղմունքը թէև սրում է մարդու միտքը մի ուղղութեամբ, բայց դարձնում է նրան նեղ, սահմանափակ: Հասարակական զգացումը այդ դէպքում գոյութիւն է ունենում միայն միատեսակ զբաղմունք ունեցողների մէջ և չէ տարածւում որոշ շրջանից դուրս՝ բարքերի ու միտքերի տարբերութեան պատճառով: Ուրեմն նույն սկզբունքը որ հնարաւոր է դարձրել հասարակաց կեանքի զարգացումը և լայնացումը, միւս կողմից կարողանում է կործանիչ ներգործութիւն անել հասարակական կեանքի վրայ:

Այդ վնասակար ազդեցութիւնից հասարակական կեանքն ազատ պահելու համար գոյութիւն ունի կառավարութիւնը:

Կառավարութիւնը նրա համար է, որ ըստ կարելոյն թուլացնէ զաղափարների, զգացումների և շահերի մէջ առաջացող անհամաձայնութիւնները, որոնք օրէցօր սաստկանալով կարգելէին հասարակական լառաջընթացութիւնը: Այդպիսով կառավարութիւնը ինքն ըստինքեան չունենալով որոշ լառաջադիմական գործունէութիւն, անուղղակի կերպով նպաստում է հասարակական լառաջադիմութեան: Մարդկութեան կեանքի զարգացման հետ չէ թուլանում կառավարութեան դերը, այլ նույնպէս աւելի ու աւելի զօրեղանում է, որովհետեւ աշխատանքի բաժանման զարգացումը շարունակ սաստկացնում է մարդկանց մէջ եղած տարբերութիւնները, հետեապէս և անհամաձայնութիւնները:

Կառավարութեան գոյութիւնը շատ բնական է, որովհետեւ իւրաքանչիւր հասարակութիւն ինքն լոժարութեամբ կամենում է նրան ունենալ, զգալով նրա անհրաժեշտութիւնը: Մենք ամենքս շատ թէ քիչ հակուած ենք լարգելու ուրիշների մտաւոր ու բարոյական գերազանցութիւնը: Մինչև անգամ ամենասարսափելի չեղափոխութիւնների ժամանակ, երբ ամեն մի հեղինակութիւն խաղտուած կարող է համարուել, ամբոխը ընտրում է իւր միջից առաջնորդներ, որոնց հնազանդում է, տեսնելով նրանց մէջ մտաւոր ու բարոյական գերազանցութիւն:

Պարզ է, որ Կօնտը կառավարութիւն ասելով ի նկատի ունի մի իսկապէս ընդունակ, բարոյական ու մտաւոր գերազանցութիւն ունեցող ուժ: